Nearpod հավելվածը աշխատում է առցանց տիրույթում: Հավելվածն ունի կիրառման վճարովի և անվճար տարբերակներ: Ստորև ներկայացվող քայլաշարով կտրամադրենք քայլ առ քայլ տեղեկատվություն, թե ինչպես օգտվել հավելվածից և ինչպես կիրառել վերջինիս հնարավորությունները ինտերակտիվ բովանդակությամբ ռեսուրսների ստեղծման համար:

Գործիքի տեղակայման և կիրառության քայլաշար.

1. Էկրանի վերևի զննարկման տողից մուտք գործել Nearpod գործիքի պաշտոնական՝ ***www.nearpod.com,*** *որն ունի հետևյալ տեսքը.*



2. Ընտրում ենք հավելվածի գործարկման անվճար տարբերակը.



3. Նպատակահարմար է մուտք գործել Google-ի ձեր հաշվով.



4. Ընտրում ենք դերը՝ <<Ուսուցիչ>>.



5. Բացվում է հավելվածի գլխավոր էջը, որտեղ տեղակայված է կիրառության <<Ուղեցույց>>.



6. Բացվում է աշխատանքային տիրույթ, որտեղ միաժամանակ կարելի է տեսնել ուսուցչի և սովորողի էկրանները.



7. Սովորողը իր էկրանից սեղմում է "**Join**" կոճակը և միանում դասին.



8. *Ի դեպ, հավելվածի ամենամեծ առավելություններից է այն, որ սովորողները կարիք չունեն "հաշիվ" ունենալու: Նրանք ընդամենը մուտք են գործում ուսուցչի կողմից տրամադրված մուտքքային կոդով:*



9. Փոխելով ուսուցչի էկրանը, միաժամանակ փոխվում է նաև սովորողի էկրանը.



10. Ակտիվացնելով հավելվածի որևէ բաժին, օրինակ "Whiteboard"-ը, ուսուցիչը կարող է ուղղակի հարցադրումներ կատարել, իսկ սովորողները կարող են ուղարկել իրենց պատասխանները՝ սեղմելով "Submit" կոճակը.



11. Դասին մասնակից բոլոր սովորողների ցանկը և նրանց պատասխանները տեսանելի են ուսուցչին.



12. Կամ ակտիվացնելով գործունեության այլ ձևեր ստացվում են սովորողների պատասխանները.



Ինչպես կարելի է կիսվել Nearpod ռեսուրսներով՝ դասեր, տեսանյութեր կամ գործունեության այլ տեսակներ.

1. Մուտք գործել "My lessons" բաժինը, սեղմել ընտրված ռեսուրսի վերին աջ անկյունում գտնվող 3 կետիկների վրա.



2. Բացվող պատուհանում առկա են գործունեության հետևյալ տեսակները.



3. Սեղմելով "Share" հրամանի վրա կառաջարկվեն ռեսուրսի արտածման հետևյալ տարբերակները.



4. Արտածված ռեսուրսը կարող է պահպանվել և վերախմբագրվել նոր օգտատիրոջ կողմից:

Ինչպե՞ս ներբեռնել կամ պատճենել Nearpod ռեսուրսները

Հավելվածով ստեղծված ռեսուրսները՝ դասեր, տեսանյութեր, կամ տարբեր գործունեության տեսակներ կարելի է ներբեռնել, կիսվել կամ տարածել: Դասավանդողները կարող են ռեսուրսները վերածել PDF ձևաչափի և պահպանել իրենց անձնական տիրույթում:

Արտածումը PDF ձևաչափով

5. Մուտք գործել ձեր ստեղծած դասերի բաժին "My lessons", այնուհետև սեղմել ընտրված ռեսուրսի վերին աջ անկյունի 3 կետիկների վրա.



2. Ընտրել PDF արտածումը (Export PDF)



3. Պահպանել PDF ձևաչափը կամ Google Drive-ում, կամ անձնական տիրույթում.



4. Պահպանված PDF ֆայլը կարելի է պատճենել կամ տպել։